Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի միջև 2016 թվականի նոյեմբերի 16-ին ստորագրվել է համագործակցության հուշագրի (այսուհետ՝ Հուշագիր):

Համագործակցության առարկան

Կողմերը համաձայնվում են համագործակցել հետևյալ ուղղություններով՝

1. **Օրենսդրական նախաձեռնություն -** նորմատիվ իրավական ակտերի նախագծերի համատեղ մշակում և ներկայացում իրավասու մարմիններին.

2 **Արագ արձագանքման միջոցառումներ -** Կոմիտեի աշխատակիցների կողմից մաքսային և հարկային ոլորտներում վարչարարություն կամ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դատավարական գործողություններ իրականացնելու ժամանակ փաստաբանների մասնագիտական պարտականությունների կատարման առնչությամբ որևէ խնդիր ծագելու դեպքում, այդ խնդրի անհապաղ քննարկումը և օրենքի տառին համապատասխան լուծումը.

3 **Քննարկումներ -** համատեղ քննարկումների (կլոր սեղաններ) կազմակերպում՝ իրավունքի կամ գործնական ոլորտում առաջացած խնդրահարույց և այլ հարցերի կապակցությամբ.

4 **Գրականության փոխանակում -** Կողմերի տիրապետման ներքո գտնվող գրականությունից ազատ օգտվելու հնարավորություն.

5 **Դիտորդական առաքելություն -** միջոցառումների կազմակերպման և անցկացման ժամանակ, ըստ կողմի հայեցողության, դիտորդների ապահովում.

6 **Այլ միջոցառումներ -** սպորտային կամ ինտելեկտուալ խաղերին կամ այլ միջոցառումներին Կոմիտեի աշխատակիցների և փաստաբանների ներգրավումը:

Բեռնել Հուշագիրը

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանի՝ 08 դեկտեմբերի 2016թ. թիվ 487-Լ որոշմամբ Հուշագրով նախատեսված համագործակցությունն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետ փոխհարաբերություններում Հուշագրի հիման վրա ստեղծված հանձնախմբի՝ ՀՀ փաստաբանների պալատի 3 անդամներ են նշանակվել՝

- **ՀՀ փաստաբանների պալատի նախագահի տեղակալ, փաստաբան՝ Կարեն Մեժլումյանին (արտոնագիր № 2).**
- **փաստաբան Նիկոլայ Հակոբյանին (արտոնագիր № 414).**
- **փաստաբան Սեդրակ Ասատրյանին (արտոնագիր № 799).**

Նույն որոշմամբ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետ փոխհարաբերություններումհամակարգող է հանդիսանում ՀՀ փաստաբանների պալատի նախագահի տեղակալ **Կարեն Մեժլումյանը**:

Կարեն Մեժլումյան
Հանձնախմբի համակարգող
Փաստաբան

Նիկոլայ Հակոբյան
Հանձնախմբի անդամ
Փաստաբան

Սեդրակ Ասատրյան
Հանձնախմբի անդամ
Փաստաբան